

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ
ԹՈՒՐԲԱՑՈՒՄՆԵՐԸ

Ա

Հայ ժողովուրդն իր կազմաւորման օրերից ի վեր լայն շփումների մէջ է եղել հարեւան ժողովուրդների ու պետութիւնների հետ (աֆաղներ, փոխգացիներ, խեքեր, խուտիտներ, ասուրներ, յոյներ, իրանցիներ, իրերոյ-կովկասցիներ, արաբներ, բուրքեր եւ այլն), եւ այդ շփումներն արտացոլում են հայոց լեզուի մէջ: Անմիջական ու միջնորդաւորուած, բանաւոր ու գրային շփումների ճանապարհով հայերէնի մէջ են ներմուծուել այդ լեզուների հարիւրաւոր բառային, իմաստային փոխառութիւններ: Հայերէնն էլ իր հերթին փոխատու է եղել բազմաթիւ լեզուների համար, քանի որ նման կարգի փոխադրեցութիւնները երկկողմանի բնոյթ են կրում:

Պատմութեան թելադրանքով ուշ միջնադարում հայերէնն ամենամեծ ազդեցութիւնը կրեց թուրքական լեզուներից: Միջանկեալ կերպով ասեմք, որ թուրքական բոլոր լեզուներն ու բարբառները սովորաբար միաւորում են «թիւրքական լեզուներ» անուան սակ, այդ թուում՝ հայերի ու Հայաստանի հետ անմիջական շփում ունեցածներին՝ թաթարներ, թիւրքմէներ, օսմանեան թուրքեր եւ այլն, իսկ Օսմանեան շրջանում առաջացած լեզուն ընդունուած է անուանել պարզապէս թուրքերէն: Սակայն անյարկի շփոթից խուսափելու համար մենք օգտագործում ենք պարզապէս «թուրքերէն», «թուրքական լեզուներ» եզրերը: Հայերէնի վրայ թուրքական ազդեցութիւնն այն աստիճանի հասաւ, որ Օսմանեան կայսրութեան որոշ մասերում առաջացան թուրքախօս հայերի խմբեր, իսկ օրինակ Կ.Պոլսի հայ բարբառում 20-րդ դարի սկզբին, լեզուաբան Հրաչեայ Աճառեանի տուեալներով, հաշուում էր մօտ 4000 թուրքերէն քառ, Վանի բարբառում՝ 1200, Ղարաբաղի բարբառում՝ 700 քառ եւ այլն¹: Հետագայում հայոց գրական լեզուներն էին, որ թօթափեցին բարբառներում առկայ այդ վիճակը, եւ ներկայումս գրական արեւմտահայերէնում ու արեւելահայերէնում թուրքական փոխառութիւնների թիւը չի անցնում 20 միաւորից, ինչպէս՝ վառոդ, ելակ, երշիկ, գմբուխտ, տոպրակ եւ այլն:

Լեզուական ֆնտրութիւններից հեռու կանգնած մէկը թուրքերէնի բողոքած ազդեցութիւնը հայերէնի վրայ անմիջապէս կարող է նկատել՝ բեքեւ հայեացք ձգելով առաջին հերթին հայոց տեղանունների վրայ: Պատմական Հայաստանի հարիւր-հարիւրաւոր բնակավայրեր, աշխարհագրական վայրեր իրենց վրայ կրում էին թուրքական ազդեցութեան կնիքը, որի լեզուական կողմի վրայ կը փորձենք կանգ առնել՝ ցոյց

տալու համար, բէ ինչ օրինաչափութիւններով էին հայերէն տեղանունները ուշ միջնադարում «թուրքանում»:

Թուրք էթնիկական տարրը Հայկական լեռնաշխարհ թափանցեց սկսած 11-րդ դարից: (Թէեւ արդի թուրք եւ ադրբեջանցի որոշ «պատմաբաններ» ճիգ են անում այդ ժամանակը հասցնել մինչեւ 7-րդ, 5-րդ դարերը, ընդհուպ... խթական ժամանակները՝ յեռուելով հայ եւ ալլագգի մատենագրութիւնների մէջ պահպանուած մի քանի լեզուական տուեալների վրայ:) Սակայն սկզբնական շրջանում՝ 11-12-13 դարերում թուրքական ցեղերի թիւը եւ բնականաբար լեզուական ազդեցութիւնը մեծ լինել չէր կարող: Հիմնականում փոշուոր կամ գիւուորական կենցաղավարութեամբ ապրող թուրքերը դեռ չէին հասցրել ամբանալ բնակելի վայրերում՝ ֆաղաֆներում ու գիւղերում: 12-րդ դարի վրաց Անանուն պատմիչը, օրինակ, թուրքերի փոշուոր կեանքը պատմում է մի դիպուկ դրուագով. «Զմռանը թուրքերն անցկացնում են Թիֆլիսից Բարդա հատուածում, այնտեղ խփում են իրենց վրանները: Գարնանը նրանք բարձրանում են Սոմխէթի (Հայաստանի-Ն.Պ.) լեռները եւ Արարատ: Ամռանը նրանք այդ հրաշալի վայրերում գտնում են անհամար արօտավայրեր եւ աղբիւրներ: Նրանց ձիերը, ոչխարները, ուղտերը, ջորիները անթիւ են...»²:

11-13 դարերի հայ մատենագիրների մօտ սկսում են հանդիպել թուրքերի մասին յիշատակումներ՝ իբրեւ նոր-նոր ծանօթացած ցեղերի: Կիրակոս Գանձակեցիին (13-րդ դար) մասնաւորաբար գրում է. «Այլ եւ խօսք մոցա խժականք անծանօթ ի մէնջ. քանզի կոչէին զանուն Աստուծոյ քանկրի, եւ զմարդն՝ էրէ, եւ զփոյր՝ աքանի... Եւ զայլ այսպիսի խժական անուանք, զոր ի քազում ամաց մեզ անծանօթ, իսկ այժմ ակամայ ծանուցեալ»³: 13-րդ դարի մէկ այլ պատմիչ՝ Դրիգոր Ակներցիին խօսում է Հայաստան ներխուժած «այլադէմ եւ զագանարարոյ» թաթարների քարքերի մասին եւ յիշատակում է նաեւ նրանց կիրառած որոշ նոր բաներ. «Երեկոյին արին *խառուրթայ*, որ ասի ժողով», «անուանեաց զնոսա *ֆէսիկթոյֆ*, որք են դոնապանք» եւ այլն⁴:

Հայ մատենագիրները ծանուցումներ են անում նաեւ արդէն անուանափոխուած եւ իւրացուած հայերէն տեղանունների վերաբերեալ, ինչպէս՝ «Կառուցէին զարժունական պալատն մեծ ի Դառն դաշտի, զոր Ալադադ կոչեն» (Ստեփանոս Օրբելեան, 13-րդ դար): Դր. Ակներցիին նոյն տեղանունն համար գրում է. «...հրամայեաց դարպաս շինել ի Դառն դաշտին, զոր կոչեցին իւրեանքն զանուն տեղւոյն Ալատադ»: Կամ Ստ. Եփեսկոպոսը (13-րդ դար) ասում է՝ «Արդուն... նստի ի Դառնոյ դաշտի, որ այժմ Ալատադ կոչեն, յԱրտագ գաւառի» եւ այլն:

Հայ-թուրքական լեզուական շփումների առաջին այս շրջանը երկկողմանի բնույթ ունէր: Եւ նոյնիսկ կարելի է պնդել, որ թուրքերը շատ քան պարզապէս վերցրին տնտեսապէս եւ յատկապէս մշակոյթով աւելի

գարգացած հայերից ու տարածաշրջանի միւս բնիկներից: Հետեւեալ մի քանի փաստերը բաւական են այդ ապացուցելու համար:

15-րդ դարում գրի առնուած «Քիթապի դադա Գորգուդ» թաթարական աւանդազրոյցում պահպանուել են մի շարք հայերէն բառեր՝ *ազնաւոր*, *գուրթ*, *եկեղեցի* (քըլիսա ձեւով), *խաչ*, *շում* (շունա ձեւով), *թագաւոր* (թըֆօր, որ նշանակում է ալլադաւան՝ քրիստոնեայ իշխան եւ որը փոխառուել ու քազմիցս հանդիպում է նաեւ միջնադարի արաբական եւ պարսկական աղբիւրներում): Հայերէն բառեր կան թուրքալեզու շատ այլ աղբիւրներում եւս՝ Նասիմիի «Դիվանում», Խիկարի խրատների թուրքերէն թարգմանութեան մէջ եւ այլն: Հայերէն հարիւրաւոր բառեր են անցել Արեւմտեան Հայաստանի թուրքական քարքաւանքին՝ *ամալ*, *ապուր*, *արօս*, *քանջար*, *գոզնոց*, *թոնիր*, *իլիկ*, *կարագ*, *կորկոտ*, *հերկ*, *ձող*, *նախարակ*, *մագաղաթ*, *մարագ*, *նիզակ*, *շիւ*, *պանիր*, *պարան*, *սոխարած*, *վամբ*, *փեթակ* եւ այլն. աղբրեջաններէն քարքաւին՝ *ասմա* («իրբ թէ»՝ հայերէն «ասում ա» ձեւից) *թել*, *խորթ*, *կռնակ*, *կորիզ*, *հատիկ*, *պահեստ*, *սամիթ*, *շէն*, *պուտուկ*, *սալ* եւ այլն: Բառերից բացի փոխառուել են նաեւ կենցաղի վերաբերեալ այլ իրողութիւններ: Այսպէս՝ Աղանայի շրջանի մահմեդական թուրքերը հաց թխելիս խաչակնիփում էին՝ ճիշտ տեղի հայերի նման...:

Հայոց տեղանունների թուրքացումները լեզուական լայն գործընթացի է վերածուում եւ մատենագրութեան մէջ որպէս կայացած փաստ ներմուծուում սկսած 16-17-րդ դարերից: Յատկապէս խօսակցական լեզուին մօտ գրուած աղբիւրներում գնալով ստուարանում է թուրքերէնից հայերէնին անցած բառերի թիւը: Դա արդիւնք է այն բանի, որ հայերէնում արդէն քաղաքացիութիւն էին ստացել թուրքական փոխառութիւնները, որոնք հանգիստ ներմուծուում էին գրաւոր խօսքի մէջ: Պետք է յիշել, որ Օսմանեան տիրապետութիւնը Հայաստանում վերջնականապէս հաստատուեց 16-րդ դարում (1514թ.), իսկ քաղաքական իրողութիւնները, յայտնի է, մեծ չափով ազդում են լեզուի վրայ:

Եւ այս շրջանից (16-17 դարեր) յատկապէս յաճախանում են հայոց տեղանունների թուրքացումները: Դրան նպաստում են թուրքերի աստիճանական անցումը նստակեցութեան, մանաւանդ որ 16-րդ դարում սուլթան Սիւլէյմանը հաստատեց նստակեցութիւնը պարտադրող հողային օրէնքները:

Բ

Մի քանի հարիւր տարի տեւած ժողովրդագրական այդ երեւոյթը՝ թուրքական ցեղերի հաստատումը Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայում մասնաւորապէս իր ներգործութիւնն ունեցաւ հայոց բնիկ տեղանունների վրայ:

Տեղանունների փոխանցումը մեկ լեզուից միւսին տարածուած է բոլոր այն լեզուներում, որոնք կրող ժողովուրդները առժամանակեայ շփումներ են ունեցել: Դա վերաբերում է նաեւ հայերէնին, որում մասնաւորապէս արարներն թիւ Բաշիրը վերածուեց Թլպաշարի, Հիւսն Մանսուր՝ Հարսն Մսուրի եւ այլն: Կամ ասեմք հայերէն մի շարք տեղանուններ թուրքերէնին անցան արարների միջնորդութեամբ, ինչպէս՝ հայերէն՝ Պարտաւ - արարերէն՝ Բարդա - թուրքերէն՝ Բարդա: Նմանապէս՝ Կապաղակ - Կաքալա. Ատրպատական - Ադրբայ(զ)գան. Գանձակ - Գեանջա եւ այլն: Սկուոր թուրքերը հայերէնից բացի փոխառեցին այլ լեզուների տեղանուններ եւս, այդ թուում յունարէնից, օրինակ՝ յունարէն Արդալիս - թուրքերէն՝ Սնդերիս. Գողասա - Գիւնդուգ. Իկոնիա - Գոնիա. Կոմանա - Գիւմեմէկ. Հերակլիա - Էրէլլի. Նեոկեսարիա - Նիսար. Սինիսֆոն - Սինեֆու եւ այլն:

Ներկայ ֆնուրեան ընթացքում բերուող հայերէն տեղանունների մի մասը թեւ կարող է ստուգաբանօրէն բնիկ հայկական ծագման չլինել, սակայն միջնադարի աղբիւրներում դրանք պահպանուել են հայերէն ձեւաւորմամբ եւ թուրքերն այդ տեղանունները վերցրին իբրեւ հայերէն անուններ: Անկախ նրանից, թէ հայերէնից թուրքերէնին անցած անունն ի սկզբանէ բնիկ հայկական է եղել, թէ իր հերթին փոխառուել է մի եւրոպայ լեզուից, միեւնոյն է՝ թուրքերէնի համար հայերէնը ներկայանում է իբրեւ փոխատու լեզու՝ իր մէկ միասնական համակարգով:

Այսպէս ուրեմն, ուշ միջնադարում հայոց հազարամեայ բնիկ տեղանունների իւրացումները թուրքերի կողմից մի քանի հիմնական ուղղութիւններով են ընթացել: Սա դրանք ամփոփուում են հետեւեալ խմբում:

ա) ՀնՁԻՆԱԿԱՆ տառադարձումներ: Հայերէնի արմատական կամ բաղադրեալ տեղանունների մի մասը խօսակցական լեզուի հարթութեան վրայ պարզապէս յարմարեցուցին թուրքերէնի հնչիւնական առանձնա-յատկութիւններին եւ ստացան նոր ձեւաւորում: Այս դէպքում ոչ մի նշանակութիւն չունի, թէ տուեալ տեղանունը հայերէնում ինչ իմաստ է արտայայտում կամ ինչ բաղադրիչներից է կազմուած: Թուրքերէնի քառակազմական միջավայրում բառը դիտուում է իբրեւ մէկ ամբողջական միաւոր: Այդպիսի օրինակներ են.

Ագարակ - Էֆրէֆ

Ալիուա դաշտ - Օլու-օվա

Աղստեւ - Աղստաֆա

Աւերակ - Էվէրէկ

Գաւառ - Գէվէռ

Երեզ - Արիգան

Ընկուզեկ - Էնկիւզէֆ

Թունդրակ - Թէնդիւրիւֆ

Կարկառ - Գյառգյառ

Կոնքի - Գիւնքի

Հարժիս - Յայջի

Ձագեճոր - Ձանգեգուր

Մանուշակ - Մէնէմշէ

Շահապոնք - Շահբուգ

Շիրակ - Շոքրազյալ

Ողական - Ախկան

Վանք - Ֆեմք (հայերեն վանք հասարակ բառը տարածուած էր թուրքական գրեթէ բոլոր բարբառներում) եւ այլն:

Կրկին վկայակոչեմք լեզուաբան Հ.Անառեանին: Թուրքերը տիրելով Հայաստանին, գրում է նա, չփոխեցին Ակն, Ձմշկածազ, Սրգնկա, Բաքերդ, Կումայրի, Կարս, Ձագածոր եւ այլ անունները, այլ թուրքերենի ձայնական օրէնքների համաձայն դարձրին Էգին, Ձիմիշգէգէֆ, Էրգինջան, Բայրուրթ, Գյումրի, Ղարս, Ջանգեզուր⁵:

Արդէն հնչիւնադարձուած տեղանունները թուրքերենի լեզուական միջավայրում կարող էին ստանալ նաեւ այլ բաղադրիչներ, ինչպէս՝ Արդնի - Արդանա *մադէն*, Մամնդաւ - Ջամանքը *սաւ* եւ այլն:

բ) ԻՄԱՍՍԱՑԻՆ պատնէնումներ: Թուրքացուած տեղանունների մէջ ամենամեծ խումբը կազմում են տեղանունների *իմաստային պատնէնումները*: Եւ ինչպէս կ'երեւայ ստորեւ բերուող օրինակներից, պատնէնուած տեղանունը կարող է եւ՝ նոյնիմաստ, եւ՝ մերձիմաստ լինել իր սկզբնական օրինակին.

Ազնուածոր - Գեօգալդարա

Աղջկաքերդ - Դըզգալա

Ամուլսար - Կըսըդաղ

Արեգունի - Գիւնէլ

Սղեգառիւ - Կամըշլը դէրէ

Մաղկուտ - Գիւլիջա

Կարմիրաղբիւր - Դըզըլ բուլաղ

Հայկո - Գեալուր դաղ

Ջորագիւղ - Դարաբէնդ

Ճերմակաւան - Աղբիլիսա

Մոխրոց - Բեօմուդու

Ջերմուկ - Իստի սու

Սեւ լճակ - Գարա կէօլ եւ

այլն:

Մի առանձին խումբ են կազմում այնպիսի տեղանունները, որոնց իմաստները կարող էին պատահականօրէն համընկնել սկզբնաձեւին տեղանքի անուանադրման ժամանակ: Օրինակ հայերէն Այծալուկումք-ը թուրքերէնում դարձել է Փալանթէօֆէն. երկու անուններն էլ ընդգծում են լեռան մերկ, ատամնաւոր ու գառիթափ կատարները⁶: Վերջին երեսուրթի պատճառ կարող էին լինել տարբեր ժողովուրդների մօտ գոյութիւն ունեցող բանահիւսական «բափառող» զրոյցները, օրինակ՝ հայերէն Սպիտակ լեռ - թուրքերէն՝ Ակդաղ, հայերէն Սեւ գետ - թուրք.՝ Կարասաւ եւ այլն, որոնք ոչ թէ փոխառութիւնների արդիւնք են, այլ կապուած են բանաւոր զրոյցների հետ՝ հիմքում ունենալով ասուրական նախնի ասանդուքիւնները:

գ) ԻՄԱՍՍԱՑԻՆ - ՀՆՁԻՆԱԿԱՆ պատնէնումներ: Այս դէպքում հայերէնից թուրքերէնին անցած տեղանունները թէ՛ հնչիւնական կազմով եւ թէ՛ իմաստով համապատասխանում են նախնականին, ինչպէս.

Ալեյուա դաշտ - Օլու օվա (թէն սա թարգմանաբար նշանակում է «մեծ դաշտ», սակայն այն հայերէն տեղանունն էր թուրքերէն իմաստաւորումն է)

Աղբերք - Աղբուլաղ

Աղիտուսար - Ախիդաղ

Զարեհաւան - Զարաֆիսանէ

Կողոթերդ - Գըղի-կալասա

Կորոյ ձոր (գետ) - Գետ սու եւ այլն:

Այս շարքում պէտք է տեղադրել նաեւ այն պատկերները, որոնց դէպքում թուրքերէնի թարգմանուցին միայն տեղանունական եզրերը՝ պահպանելով բուն անունը, ինչպէս՝

Այրիգետ - Այրիչայ (նաեւ՝ Այրիսու)

Անգու գետ - Անգու սու

Առնոյ սար - Առնոսաղաղ

Ատանայի դաշտ - Ատանա օվասը

Թորոսցոց գեղ - Թորոսլի

Սեւան (ամրոց Արեակ լճի մօտ) - Սէվան կալա եւ այլն:

Գ

Մեր տեղանուններն ահա այսպիսի ժառանգութեամբ են հասել մեր օրերը: Ներկայ յօդուածում թուրքացուած տեղանունների չնչին մասը բերուեց, մինչդեռ այդպիսի միայն քաղաքների ու գիւղերի անունների թիւը մեր քարտարանում անցնում է հինգ հազարից: Հայաստանում պետական մակարդակով շարունակական աշխատանք է տարուում թուրքացուած այդ տեղանունների փոխարէն ընդհանրականը վերականգնելու համար: Վերջին 10 տարում պետական որոշումներով իրենց նախկին անունները վերստացան Հայաստանի 180 գիւղեր ու քաղաքներ: Ի դէպ այս ուղղութեամբ որոշակի դեր կատարեց նաեւ Երեւանի պետական համալսարանում պրոֆ. Յովհաննէս Բարսեղեանի գլխաւորութեամբ գործող «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների քառարան» գիտական կենտրոնը, որի աշխատանքների արդիւնքը տպագրուել է չորս ստուար հատորներում եւ հրատարակութեան է պատրաստուել հինգերորդ հատորը:

Դա Հայաստանում: Սակայն ժամանակակից Թուրքիայում հայոց տեղանունների թուրքացումները միտումնաւոր եւ ուղղորդուած տեսք են ստացել այն դէպքում, երբ դրանք միջնադարում տարեբային բնոյթ էին կրում: Դադալակութեամբ հարիւրամեակներով յայտնի հայերէն (եւ ոչ միայն հայերէն) տեղանունները փոխարինուում են թուրքերէն նոր անուններով: «Վերջերս թուրքերը ճիգ կը թափեն հայերով բնակեցուած վայրերու անունները ջնջել եւ նոր թրքաբառ անուններ տալ անոնց: Միս

եղած է Գոգան, Զէյթուն՝ Սիւլէյմանլիէ, Աւագկալ՝ Զուֆուրիսար, Հոռմկալ՝ Խալիֆէթի եւ այլն»⁷։ Իսկ օրինակ թուրք աշխարհագրագետ Քէսիմ Դարկոտն իր «Թուրքիայի աշխարհագրութիւն» գրքում Հայկական լեռնաշխարհը նկարագրելիս ոչ մի հայերէն տեղանուն չի յիշատակում, գիտակցաբար շրջանցում է մինչեւ անգամ հանրայայտ Հայկական Տաւրոս, Վան եւ այլ տեղանունները, Հայկական լեռնաշխարհը դարձնում է Թուրքական (Արեւելեան) Անատոլիա, ընդհուպ մինչեւ Արարատը՝ Ադրի դադ։ Պատմական Հայաստանի տեղանունների վերականգնման միակ դէպքը Թուրքիայում թերեւս Անի բերդի մօտ թուրքական Օնաքը գիւղն է, որ վերջերս վերանուանուեց Անի, սակայն՝ բոլորովին այլ նպատակներով։

Սակայն, անկախ ամենից, *տեղանունները հռդի լեզուն են*, որոնք ի գօրու են գրքերից ու ֆարերից ոչ պակաս արժանահաւատօրէն խօսելու այս կամ այն տարածքի ու երկրի բնակիչների, պատմութեան մասին։ Եւ այդպիսի «ձայնով» են օժտուած նաեւ հազարաւոր տարիների կեանք ունեցող հայոց տեղանունները։

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Ծանօթագրութիւններ

1. Հ. Անտեան, Հայոց լեզուի պատմութիւն, մաս 2-րդ, Երեւան, 1953թ., «Թուրքական փոխառութիւնները» բաժինը։
2. Անանուն Պատմիչ, Վրաստանի պատմութիւն, Թրիլիսի, 1962թ., էջ 358, ռուսերէն հրատարակութիւնից թարգմանումը՝ Ն.Պ.։
3. Կիրակոս Դանձակեցի, Պատմութիւն, Երեւան, 1961թ., էջ 67։
4. Դրիգոր Վրդ. Ակներցի, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1974թ.։ Նորայր Արք. Պողարեանն այս հրատարակութիւնն իրականացրել է Ս.Յակոբեանց Մատենադարանի ք.32 հարազատ ձեռագրից։
5. Հ. Անտեան, Հայոց լեզուի պատմութիւն, մաս 1-ին, Երեւան, 1940, էջ 188։
6. Հմմտ. Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի ժամանակաշրջանում, Երեւան, 1987թ., էջ 30։
7. Յ. Տէր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, Անքիլիսա, 1966թ., էջ 220։